Հայտարարություն

,Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցե ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 2022-2023 ուսումնական տարում ,Հայոց եկեղեցու պատմություն՝ /7 դասաժամ/, առարկայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել ուսուցչի պաշտոնին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձնագիր,

4) աշխատանքային գրքույկ,

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. սեպտեմբերի 6-ից մինչեւ սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում:

Հեռախոս՝ 093-30-43-74